ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/130

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16540-18 գրությամբ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 06.09.2018թ. թիվ ԴՎԱ/3371 գրության հիման վրա, 13.09.2018թ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.09.2018թ. թիվ ԴՎԱ/3371 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 13-րդ չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը: Վերջինիս ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյան կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ պահանջվող 13-րդ և 62-րդ չափաբաժինների մասով ապրանքների ամբողջական նկարագրերի փոխարեն մասնակցի կողմից ներկայացվել 62-րդ և 74-րդ չափաբաժիններ ամբողջական նկարագրերը:

Գնահատող հանձնաժողովը 27.08.2018թ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ պահանջելով շտկել անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում վերջինիս կողմից չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները՝ որոշեց մերժել Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի հայտը:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.09.2018թ. գրությամբ դիմել է Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16540-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ա/Ձ-ի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ա/Ձ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16540-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.09.2018թ. թիվ ԴՎԱ/3371 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 11.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 և 27.08.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությունները, Ընկերության կողմից ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից 12.07.2018թ. և 28.08.2018թ. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությունները.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

• N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

• N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Հովհաննես Հովհաննիսյան Ա/Ձ–ն պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 11.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության՝

• 4.1 կետով որոշել է Ընթացակարգի 13-րդ և 62-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին:

• 4.2 կետով որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 27.08.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջների

համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես.

- պահանջվող 13-րդ և 62-րդ չափաբաժինների մասով ապրանքների ամբողջական նկարագրերի փոխարեն մասնակցի կողմից ներկայացվել է 62-րդ և 74-րդ չափաբաժինների ամբողջական նկարագրերը:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, պահանջելով շտկել առկա անհամապատասխանությունը:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել Հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի շտկված տարբերակը:

Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը՝ 12.07.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին, հայտնելով հետևյալը.

«Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում 13-րդ չափաբաժնի մասով տեխնիկական վրիպակի արդյունքում հաշվարկվել է միայն 3-րդ եռամսյակի համար նախատեսված 50 հատ գործարկիչ հավաքականի գինը՝ 2.250.000 ՀՀ դրամ, իսկ 13-րդ չափաբաժնի մասով սահմանված է եղել 100 հատ գործարկիչ հավաքականի մատակարարում 3-րդ և 4-րդ եռամսայներում, ճիշտ հաշվարկի արդյունքում իմ կողմից ներկայացված գնային առաջարկը 13-րդ չափաբաժնի մասով կկազմեր՝ 4.500.000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 5.1 կետը, խնդրում եմ իմ կողմից ներկայացված գնային առաջարկը 13-րդ չափաբաժնի մասով չքննարկել:

Անհրաժեշտության դեպքում կարող եմ ներկայացնել 13-րդ չափաբաժնի մասով մատակարարման ենթակա 100 հատ գործարկիչ հավաքականի, ինքնարժեքի հաշվարկը:»:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, ի պատասխան Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի 12.07.2018թ. գրության, հայտնել է, որ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից ներկայացված գնման հայտը, այդ թվում գնային առաջարկը, համապատասխանում է գնումների օրենսդրության և հրավերի պահանջներին, ուստի 13-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը չքննարկելու հիմքերը բացակայում են:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.08.2018թ. էլեկտրոնային ոչ ավտոմատ armeps.am համակարգի միջոցով Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին ծանուցել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի 13-րդ և 62-րդ չափաբաժինների մասով ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 6.1 հավելվածով ներկայացրել է՝ 62-րդ և 74-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը 27.08.2018թ. ծանուցմամբ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված՝ հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և պարզվել է, որ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ էլեկտրոնային ոչ ավտոմատ armeps.am համակարգի միջոցով Ձեզ ծանուցվել է ներկայացնել 13-րդ և 62-րդ չափաբաժինների մասով ապրանքների ամբողջական նկարագրեր, սակայն Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերում նշված է 62-րդ և 74-րդ չափաբաժիններ ամբողջական նկարագրերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև

կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունը, իսկ շտկված անհամապատասխանությունը ուղարկել v.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեին:»:

Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը 28.08.2018թ. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մեր կողմից ներկայացված 74-րդ չափաբաժնի գնային առաջարկի և առաջին տեղ զբաղեցնող կազմակերպության գնային առաջարկի տարբերությունը մոտավորապես 7000 ՀՀ դրամ է (840000 ՀՀ դրամ – 833333 ՀՀ դրամ), ինչը հաշվի առնելով գնահատող հանձնաժողովը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը առաջին տեղ զբաղեցրած է ճանաչել ցածր գին առաջարկող կազմակերպությանը:

Իսկ ինչ վերաբերում է 13-րդ չափաբաժնին, գնահատող հանձնաժողովը անհասկանալի կերպով անտեսում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի պահանջը, այն դեպքում, որ մենք գրավոր դիմել ենք գնահատող հանձնաժողովին՝ նշելով, որ գնային առումով մեր կազմակերպությունը սխալմամբ առաջարկել է 2.250.000 ՀՀ դրամով պակաս գումար և խնդրել 13-րդ չափաբաժնի մասով չքննարկել գնային առաջարկը:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային

երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, ևփաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/9 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի.

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների)

ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

- 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում նույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

- 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Պատվիրատուի կողմից համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով 27.08.2018թ. Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին ուղարկվել է ծանուցում, որով վերինիցս պահանջվել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել 13-րդ և 62-րդ չափաբաժինների մասով ապրանքների ամբողջական նկարագրերը:

- Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը 13-րդ և 62-րդ չափաբաժինների մասով ապրանքների ամբողջական նկարագրերի փոխարեն ներկայացրել է 62-րդ և 74-րդ չափաբաժիններ ամբողջական նկարագրերը:

- Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, պահանջելով շտկել առկա անհամապատասխանությունը, սական մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկված տարբերակը չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանը Հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող շտկված փաստաթղթերը չներկայացնելով՝ խախտել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16540-18 գրությամբ Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. Ա/Ձ Հովհաննես Հովհաննիսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ